

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2020թ. I եռամսյակում ԱՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության գործունեության վերաբերյալ

2020թ. I եռամսյակում իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից որոշակի աշխատանք է կատարվել համակարգին վերապահված խնդիրների իրականացման ուղղությամբ:

Այսպես, հաշվետու ժամանակահատվածում պետական գրանցման են ենթարկվել 68 առևտրային և 15 ոչ առևտրային տիպի իրավաբանական անձ, 86-ի հիմնադիր փաստաթղթերի փոփոխությունները սահմանված կարգով գրանցվել են (ստացել են ընթացիկ գրանցում), իսկ 7-ի գործունեությունը՝ դադարեցվել:

5 հիմնարկ և 1 իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանում ենթարկվել են ընթացիկ պետական հաշվառման:

Պետական հաշվառման են ենթարկվել նաև 167 անհատ ձեռնարկատեր, 51-ը՝ ենթարկվել ընթացիկ պետական հաշվառման, իսկ 23-ի գործունեությունը՝ դադարեցվել:

11 սուբյեկտի վերաբերյալ տրամադրվել են ամբողջական տեղեկություններ:

Ըստ գրասենյակների գրանցման գործընթացի իրավիճակը ընդլայնվում է հետևյալ կերպ.

անվանում	իրավաբանական անձ			իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանում և հիմնարկ			անհատ ձեռնարկատեր			Ամբողջական տեղեկությունների տրամադրում	ընդամենը	պետ. տուրք (հազ. դրամ)
	սկզբ.	ընթ.	Լուծ/դադ.	սկզբ.	ընթ.	Լուծ/դադ.	սկզբ.	ընթ.	գործ. դադար.			
<i>Կենտրոնական մարմին</i>	13	9	1								23	175
<i>Ստեփանակերտ</i>	50	61	6		1/1		62	36	19	9	245	1485
<i>Ասկերան</i>	4	4			3		16	6	1	1	35	160
<i>Հաղբուք</i>		2					19	1			22	70,5
<i>Մարտակերտ</i>	5	4					28	2		1	40	196
<i>Մարտունի</i>	5	3					23	5			36	179,5
<i>Շուշի</i>	3	2					11	1	3		20	97,5
<i>Քաշաթաղ</i>	3	1			1		8				13	86
<i>Ընդամենը</i>	83	86	7		5/1		167	51	23	11	434	2449,5

Պետական միասնական գրանցամատյանից տրվել է 160 (156/4) տեղեկանք:

Տրամադրվել են իրավաբանական անձանց 4 կանոնադրությունների պատճեններ:

Վերը նշված գրանցումների դիմաց գանձվել է 2 617 500 դրամ պետական տուրք:

Գործակալության կողմից մատուցած վճարովի ծառայությունների արդյունքում I եռամսյակում արտաբյուջե է մտցվել 831 000 դրամ:

ԱՀ Նախագահի ծրագրից բխող միջոցառումների կատարման շրջանակներում իրականացվել են նախկինում գրանցված (հաշվառված) 10 սուբյեկտների վերաբերյալ ամբողջական տեղեկությունների՝ էլեկտրոնային եղանակով e-register.am կայքում տեղադրման աշխատանքներ:

Կազմակերպվել են նաև քաղաքացիների ընդունելություններ, նրանց բազմաթիվ հարցերին տրվել ապառիչ պատասխաններ:

Գործակալության կենտրոնական մարմնի կողմից սիստեմատիկ հսկողություն է իրականացվել գործակալության կառուցվածքային ստորաբաժանման նկատմամբ, տրվել ոլորտը կարգավորող օրենսդրության պարզաբանումներ և մեթոդական ցուցումներ: